Գործարարության աջակցման խորհուրդ

2001թ. տարեկան հաշվետվություն

ԽՈՐՀՐԴԻ 1-ԻՆ ՆԻՍՏ

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ Գործարարության աջակցման խորհրդի անդրանիկ նիստը տեղի է ունեցել 2001թ. փետրվարի 6-ին: Զարգացման հայկական գործակալությունը խորհրդի անդամներին է ուղարկել Գործարարության աջակցման խորհրդի կանոնադրության նախագիծը, խորհրդում ընդգրկված անդամների ցանկը, Համաշխարհային Բանկի եւ Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի համատեղ մշակած խորհրդագրի հայերեն թարգմանությունը:

Անդրանիկ նիստի արդյունքում խորհուրդը՝
ա/ որոշեց հավանություն տալ խորհրդի կանոնադրությանը եւ ներկայացնել կառավարության հաստատմանը,
բ/ մի շարք հանձնարարականներ տրվեցին:

Արդյունքում՝
1. Սերտ համագործակցություն հաստատվեց պետական մարմինների եւ գործարարների միջեւ :
2. Պետական կառավարման մարմիններին հանձնարարվեց մշակել ԱԱՀ-ի գծով գերավճարների հետվերադարձման կարգը:
3. Շրջանառության մեջ դրվեց «Ներդրումների մասին » ՀՀ օրենքի նախագիծը :

ԽՈՐՀՐԴԻ 2-ՐԴ ՆԻՍՏ

Գործարարության աջակցման խորհրդի հաջորդ (2-րդ) նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ Զարգացման հայկական գործակալությունը, հաշվի առնելով խորհրդի անդամների առաջարկները, ներկայացրել է հարկային եւ մաքսային դաշտին վերաբերող ամփոփ տեղեկանք: ԶՀԳ-ն խորհրդի անդամներին է ներկայացրել նաեւ ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգը, ինչպես նաեւ «Ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Գործարարության աջակցման խորհրդի 2-րդ նիստը կայացել է 2001թ. մարտի 2-ին, օրակարգում ընդգրկված են եղել հետեւյալ հարցերը՝ ներդրումներ, դրանց հետ կապված հարկային դաշտ, այդ թվում՝ 1.կանոնադրական կապիտալի ավելացմանն ուղղվող միջոցների հարկումը, 2.սեփական արտադրության համար ներկրվող հումքի եւ կիսապատրաստուկների հարկումը:

ԶՀԳ-ն նախապատրաստել եւ խորհրդի անդամներին՝ այդ թվում ռոտացիոն կարգով ընդգրկված գործարարներին /28 գործարար/ է ներկայացրել 2001թ. մարտի 2-ին կայացած Գործարարության աջակցման խորհրդի նիստի N2 արձանագրությունը, ՀՀ կառավարության 2001թ. աշխատանքային ծրագիրը, «Հարկային ու մաքսային բարեփոխումների հայեցակարգը», «Գործարար միջավայրում բարեփոխումների ուղենիշները» եւ «Պրոբլեմների բանկը»:

Սույն թվականի մարտի 21-ին ԶՀԳ-ն կազմակերպել է գործարար համայնքի 28 ներկայացուցիչների հանդիպում ՀՀ վարչապետի մոտ, որտեղ կարեւորվել է գործարարների մասնակցության դերը ներդրումների խթանման, վարչարարական խոչընդոտների վերացման գործընթացում:

Արդյունքում՝
1. «Գործարար միջավայրում բարեփոխումների ուղենիշները» փաստաթղթի հիման վրա ստեղծվեց «Պրոբլեմների բանկը»:

2. Գործարար համայնքի ներկայացուցիչները մասնակցեցին ՀՀ կառավարության գործունեության ծրագիրն ապահովող միջոցառումների ցանկի, «Հարկային ու մաքսային բարեփոխումների հայեցակարգի» քննարկումներին

ԽՈՐՀՐԴԻ 3-ՐԴ ՆԻՍՏ

Գործարարության աջակցման խորհրդի 3-րդ նիստը գումարվել է 2001թ. ապրիլի 6-ին հետեւյալ օրակարգով՝ ՀՀ կառավարության 2001թ. աշխատանքային ծրագրի, «Հարկային եւ մաքսային բարեփոխումների հայեցակարգի» եւ «Գործարար միջավայրում բարեփոխումների ուղենիշների» վերաբերյալ առաջարկների քննարկում, գրավի առարկայի իրացման գործընթացի կարգավորում, «Ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկում եւ այլ հարցեր/այդ թվում՝ գործարարների հետ հանդիպման արդյունքում ձեւավորված հարցեր, կանոնադրական կապիտալ ուղղվող միջոցների՝ ԱԱՀ-ից ազատման դեպքում հետեւանքների եւ պետբյուջեի կորուստների վերաբերյալ փորձագիտական եզրակացության քննարկում/:

Խորհրդի նիստի N 4 արձանագրությամբ մի շարք հանձնարարականներ են տրվել խորհրդի անդամներին եւ այլ շահագրգիռ մարմինների, մասնավորապես՝ ՀՀ արդարադատության նախարարությանը եւ ՀՀ պետեկամուտների նախարարությանը:

ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարարությունն ի կատարումն տրված հանձնարարականների քննարկումներ է իրականացրել Համաշխարհային Բանկի ներկայացուցիչների հետ, որի արդյունքում մշակվել է ՀԲ-ի կողմից ներկայացված բիզնես չափորոշիչները: Քննարկումներ են տարվել նաեւ «Ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագծի շուրջ: Որոշվեց օրենքի նոր տարբերակի ընդունումը համարել վաղաժամ, եւ հարցը հանվեց օրակարգից:

Որպես հանձնարարական, ԶՀԳ-ն շրջանառության մեջ է դրել «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի հրատապ ընդունումը խորհուրդը համարել է անհետաձգելի:

ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունը, ամփոփելով գործարարների կողմից բարձրացված հարցերը, պարզաբանումներ է տվել հարկային մի շարք հարցերի վերաբերյալ:

Արդյունքում՝
1. Լսվեց համաշխարհային բանկի զեկույցը եւ որոշվեց վեց ամիս հետո կատարել նոր հետազոտություններ՝ ստեղծելով աշխատանքային խմբեր:
2. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» եւ «ՀՀ քաղա-քացիական օրենսգիրքը գործողություն մեջ դնելու մասին ՀՀ օրենքում փոփոխու-թյուն կատարելու մասին» ՀՀ օրենքները մասնակիորեն կարգավորեցին գրավի առարկայի իրացման գործընթացը:
3. Քննարկվեց ՀՀ արդարադատության նախարարի 1999թ մայիսի 18-ի թիվ 786 հրամանով եւ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի 1999թ. մայիսի 18-ի թիվ 195 հրամանով հաստատված «Կատարողական գործողությունների կատարման ծախսե-րի հաշվարկման» կարգը /գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 19.05.99թ., գրանցման թիվ 10299079/՝ հավելված 1-ում սակար-կությունների կազմակերպման եւ գույքի իրացման աշխատանքների իրակա-նացման ընթացքում առաջացած ծախսերի համար նախատեսված հաշվարկի միա-վորի մասով, որոշվեց ակտը թողնել անփոփոխ:
4. Որոշվեց «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի ընդունման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կազմակերպել շահագրգիռ քննարկումներ:
5. ««Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածով սահմանված ՀՀ ռեզիդենտների եւ ոչ ռեզիդենտների բանկային ավանդից ստացված տոկոսների եկամտահարկով հարկման ժամկետների հավ-ասարեցման համար ընդունվեց համապատասխան գերատեսչական ակտ:

ԽՈՐՀՐԴԻ 4-ՐԴ ՆԻՍՏ

Խորհրդի 4-րդ նիստը տեղի է ունեցել 2001թ. մայիսի 21-ին, հետեւյալ օրակարգով՝ «Պրոբլեմների բանկի» քննարկում, «Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ-ի առաջարկների քննարկում, ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարարության առաջարկների քննարկում, այլ հարցեր: Քննարկման արդյունքում կազմվել է N 5 արձանագրությունը, որի համաձայն՝

ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունը պարզաբանումներ է տվել «Քեյ-Փի-Էմ-Ջի» Արմենիա ՓԲԸ-ի ներկայացրած մի շարք հարցերի վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների նախարարությունը օրենսդրությանը համապա-տասխան հիմնավորել է այն բոլոր պրոբլեմները, որոնք առաջ են քաշվել գործարարների կողմից:

Աշխատանքներ են տարվել ԱԱՀ-ի հետվերադարձման մեխանիզմերի մշակման ուղղությամբ:

Արդյունքում՝
1. ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վ.Խաչատրյանին հանձնարարվեց քարտուղարության միջոցով ներկայացնել առաջարկ՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի, նաեւ նշված հարկատեսակը այլ հարկով փոխարինելու վերաբերյալ:
2. ՀՀ պետական եկամուտների նախարարությունը պարզաբանումներ տվեց ներմուծվող ապրանքների մաքսազերծման համար պահանջվող փաս-տաթղթերի ցանկի վերաբերյալ:

ԽՈՐՀՐԴԻ 5-րդ ՆԻՍՏ

Գործարարության աջակցման խորհրդի 5-րդ նիստը գումարվել է 2001թ. հուլիսի 18-ին: ԳԱԽ ս.թ. հուլիս 18-ի նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետով ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունը ներկայացրել էր տեղեկանք՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու կամ շահութահարկը այլ հարկատեսակով փոխարինելու նպատակահարմարության հարցի վերաբերյալ: ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունը ներկայումս արդարացի չի համարում շուտափույթ որոշումներ կայացնելը եւ առաջարկում է խնդրին անդրադառնալ ամբողջական ուսումնասիրություններ իրականացնելուց եւ բավական փորձ ձեռք բերելուց հետո:

Ի կատարումն ԳԱԽ-ի թիվ 6-րդ արձանագրության 2-րդ կետի, ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարությունը՝ ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի հետ համատեղ քննարկել է մաքսային մարմինների կողմից ձայներիզների, ձայնասկավառակների, համակարգչային դիսկետների ստուգման գործընթացի օրենսդրական հիմնավորման եւ արտահանվող ապրանքների համար ապրանքի ծագման հավաստագրի ներկայացման պարտադիր պահանջի հետ կապված հարցերը եւ ներկայացրել է համապատասխան գրություն:

ԳԱԽ-ի թիվ 6-րդ արձանագրության 3-րդ կետի ա/ ենթակետի հանձանարարականը ապահովելու նպատակով՝ շինարարության բնագավառում լիցենզավորման ընթացակարգերը հստակեցնելու, նախատեսված ծախսերը նվազեցնելու, նշված գործընթացը «մեկ պատուհանի» սկզբունքով իրականացնելու նպատակով, ՀՀ քաղաքաշինության նախարարությունը ներկայացրել է տեղեկանք՝ քաղաքաշինական գործունեության բնագավառում հստակեցում եւ պարզեցում պահանջող որոշակի դրույթների կանոնակարգման վերաբերյալ:

4-րդ կետի գ/ ենթակետի համաձայն՝ ՀՀ մաքսային կոմիտեի հետ համատեղ ներկայացվել է ապրանքների ներմուծման եւ արտահանման դեպքում ապրանքների ծագման երկրի մասին տեղեկատվության պարտադիր պահանջի օրենսդրական հիմնավորումը ու ՀՀ կառավարության համապատասխան որոշումը:

ԽՈՐՀՐԴԻ 6-րդ ՆԻՍՏ

Գործարարության աջակցման խորհրդի 6-րդ նիստը գումարվել է 2001թ. սեպտեմբերի 10-ին: Նիստի արդյունքում.

Որոշվեց օրակարգից հանել ՀՀ պետական եկամուտների նախարարության կողմից ներկայացված ութ օրենքների նախագծերի քննարկումը: Նախագծերի քննարկմանն անդրադառնալ հաջորդ նիստին՝ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության դիրքորոշումն ստանալուց հետո:

Հարկային փաթեթը շահագրգիռ քննարկումներից հետո ներկայացվել է ԱԺ:

Ֆիզիկական անձին սնանկ ճանաչելու մասին օրենս-դրության անհրաժեշտության եւ դրա ընդունման ժամանակացույցի վերա-բեր-յալ ՀՀ արդարադատության նախարարությունը տեղեկացրել է վերը նշված օրենքի մշակման ժամկետի մասին, այն է՝ 2002թ. մարտ ամիսը:

Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ Ա.Ղազարյանը զեկուցել է ս.թ. հունիսի 16-17-ը ԱՄՆ-ի Գլենդել քաղաքում կայացած Արմէքսպո-2001 ցուցահանդեսին Հայաստանի մասնակցության արդյունքների մասին:

ԽՈՐՀՐԴԻ 7-րդ ՆԻՍՏ

Գործարարության աջակցման խորհրդի 7-րդ նիստը գումարվել է նոյեմբերի 17-ին, հետեւյալ օրակարգով ՝ 1.«Հայաստան. Կարգավորիչ եւ վարչարարական ծախսերի հետազոտություն», 2. Գործարարներից ստացված առաջարկների քննարկում

Նիստում լսվեց Համաշխարհային բանկի զեկույցը, համաձայն որի անցվացված հետազոտությունների արդյունքները գնահատվեցին բավարար՝ նախորդ հետազոտության արդյունքների համեմատ:

Քանի որ զեկույցի արդյունքները ներառում էին մինչեւ ս.թ. օգոստոս ամիսը, ուստի ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վ. Խաչատրյանին եւ ՀՀ արդյունա-բերության եւ առեւտրի նախարար Կ.Ճշմարիտյանին հանձնարարվեց «Վերջին զարգացումները Հայաստանի գործարար միջավայրում» փաստաթղթի վերաբերյալ քարտուղա-ությանը ներկայացնել տեղեկանք՝ զեկույցում արձանագրված առաջարկների մասով, ինչպես նաեւ գործարար միջավայրի բարելավմանն ուղղված կատար-վելիք միջոցառումների մասին:

ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարարությունը ներկայացրել է տեղեկանք «Վերջին զարգացումները Հայաստանի գործարար միջավայրում» փաստաթղթի վերաբերյալ, որում ամփոփված են արդեն կատարված աշխատանքները, իսկ կատարվելիք միջոցառումներին Գործարարության աջակցման խորհուրդը կանդրադառնա իր առաջիկա նիստերում:

ՀՀ վարչապետի մոտ կազմակերպված խորհրդակցության արդյունքում «Հայ - Ամերիկյան հեռուստատեսային հաղորդակցություն» ՓԲԸ-ի վերալի-ցեն-զավորման հարցի վերաբերյալ որոշվել է ծագած բոլոր հարցերը լուծել բանակցությունների միջոցով՝ հաշվի առնելով ընկերության շահերը:

Շինարարության թույլտվությունների ներ-քին ընթացակարգերի պարզեցմանն ուղղված միջոցառումների կատարման ուղղությամբ ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել իրավական ակտերի նախագծեր:

Աշխատանքներ են տարվել նաեւ խորհրդի անդամ, Հայաստանի արդյունա-բերողների եւ գործարարների միության նախագահ Ա.Ղազարյանի հայտարարության՝ հայկական

բեռնա-փոխադրումների գների թանկացման ուղղությամբ, ՀՀ արդյունաբերության եւ առեւտրի նախարարությաւնը հանձնարարվել է պաշտոնական գրությամբ դիմել համապատաս-խան մարմիններին՝ հարցի հնարավոր արդյունավետ լուծ-ման համար:

ՀՀ վարչապետի 21.12.2001թ. N 896 որոշմամբ հաստատվել է /ռոտացիոն կարգով/ խորհրդի նոր կազմը:

ԽՈՐՀՐԴԻ 8-րդ ՆԻՍՏ

Խորհրդի տարեկան վերջին նիստը գումարվեց 2001թ. դեկտեմբերի 25-ին, որտեղ քննարկվեցին նախորդ նիստերի հանձնարարականների կատարման ընթացքը, ՀՀ արդյունաբերողների եւ գործարարների միության առաջարկությունները: Ձեռք բերվեցին մի շարք պայմանավորվածություններ, տրվեցին հանձնարարականներ:

Խորհրդի տարեկան աշխատանքները գնահատվեցին դրական: